ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՏԻԿԻՆ Հ.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ք.Երևան 25.10.2023 թ

Ռաշիդ Սերոբի Գալստյան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչության փորձագետ

Պայմանագիր N 25 առ 17.07.2023 թ.

Հաշվետու ժամանակաշրջան՝ **17.07.2023 թ.-16.10.2023 թ.**

Համաձայն պայմանագրի պահանջների իմ կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. աջակցել եմ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) հանձնված կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի՝ օրենսդրությանը համապատասխանեցման աշխատանքներին՝ կատարել եմ երեք պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխման և համապատասխան հրամանների կազմման աշխատանքներ.

2. իրականացրել եմ Նախարարություն ներկայացված դիմումների, բողոքների, առաջարկությունների և այլ գրությունների վերաբերյալ իրավական գնահատականների տրամադրման աշխատանքներ՝ կարծիք եմ ներկայացրել 11 փաստաթղթի վերաբերյալ,

3. 14 գրություն եմ պատրաստել՝ որպես քաղաքացիների դիմումների և կազմակերպությունների գրությունների պատասխան.

4. ամենօրյա խորհրդատվություն եմ տրամադրել Նախարարության և Նախարարության համակարգի կազմակերպությունների աշխատակիցներին՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների իրավական կարգավորում պահանջող հարցերի վերաբերյալ.

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N N 450-Ն որոշման համաձայն՝ 2023 թվականի հոկտեմբերի 1-ից պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ձմեռային զորակոչից տարկետումների տրամադրման գործընթացի աշխատանքներն են իրականացնում: 2023 թվականի հոկտեմբերի 16-ի դրությամբ 3 քաղաքացի են դիմել տարկետման համար՝ մարզական նվաճում ունենալու

հիմքով, դիմումները հաշվառել եմ, ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրել եմ, մարզական նվաճումների հավաստիության ստուգման համար դրանք համեմատել եմ համապատասխան միջոցառումների արխիվային տվյալների հետ՝ ըստ հղումների: Մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 430-Ն որոշման 2-րդ հավելվածով և N 451-Ն որոշումով նախատեսված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետումների տրամադրման գործընթացի աշխատանքներին՝ ամենօրյա պարզաբանում տալով և իրավական աջակցություն ցուցաբերելով քաղաքացիներին և ուսումնական հաստատություններին.

6. պատասխան գրություն եմ նախապատրաստել Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն որոշմամբ սահմանված կարգի խախտումով ՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատման վերաբերյալ մարզիկի դիմումին և այն սահմանված կարգով ուղարկվել է դիմումատուին.

7. Նախարարության անունից համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով իրավաբանական անձանց հետ հուշագրերի կնքման հետ կապված՝ կարծիք եմ նախապատրաստել և ներկայացրել երկու հուշագրի վերաբերյալ,

8. իրականացրել եմ Նախարարության գործունեության ոլորտների իրավական ակտերի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովման աշխատանքներ՝ կարծիք եմ նախապատրաստել և ներկայացրել Հայաստանի Հանրապետության կառավարության 13 որոշման, Հայաստանի Հանրապետության 3 օրենքի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի և Նախարարության աշխատակազմի ղեկավարի 46 հրամանների նախագծերի վերաբերյալ: կազմել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության մեկ որոշման նախագիծ:

Փորձագետ՝

Ռաշիդ Գալստյան